ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

մայիսի 13-14, 2024 թ., Երևան, Հայաստան

Norad Sida UN WOMEN

Բովանդակություն

Գործադիր ամփոփագիր 3

Օր 1

Ներածություն 6

Նիստ 1. Փախստականների պաշտպանությունը և հզորացումը Հայաստանում. Կառավարության, քաղաքացիական հասարակության և ՄԱԿ-ի գործակալությունների դիտարկումները 7

Նիստ 2. Կանանց կողմից ղեկավարվող կազմակերպություններն առաջնագծում. դիտարկումներ փախստականների կարիքներին արձագանքման ջանքերից 11

Նիստ 3. Գենդերարձագանքող գործողություն փախստական կանանց և աղջիկների համար. խոցելի խմբերի բացահայտում 13

Նիստ 4. Փախստականակենտրոն պետական և տեղական զարգացման ծրագրերի առանցքային առաջնահերթությունների, բացերի, մարտահրավերների և հնարավորությունների բացահայտում 14

Օր 2

Ներածություն 22

Եզրափակիչ նիստ. կանանց կողմից ղեկավարվող և կանանց իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների իրագործելի առաջարկները և պահանջվող ռեսուրսները՝ անցումային փուլում փախստական կանանց արդյունավետ ներառման համար 24

Հավելված 1: Օրակարգ 27

Հավելված 2. Մասնակիցների ցանկ 29

Գործադիր ամփոփագիր

Ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ռազմական գործո-ղությունների հետևանքով 2023թ. սեպ-տեմբերից Հայաստան է ժամանել 115,183 փախստական, որից 52%-ը՝ կանայք և աղջիկներ: Փախստականների հրատապ մարդասիրական կարիքները հասցեա-գրելու համար 2023թ. հոկտեմբերին գործարկվել է Հայաստանում Փախստա-կանների կարիքներին արձագանքման միջգերատեսչական ծրագիրը (ՓԿԱԾ), որը գլխավորում էր ՄԱԿ-ի Փախստա-կանների հարցերով գերագույն հանձնա-կատարի գրասենյակը (ՄԱՓԳՀ)-ն: Այս համակարգված ջանքերն ուղղված էին պետական արձագանքման մեխանիզմ-ները գործի դնելուն և վեցամսյա ժամկե-տում կենսական աջակցություն ցուցաբե-րելուն:

Հայաստանի կառավարությունը նոր ժա-մանած բոլոր փախստականներին 2024թ. ապրիլի դրությամբ արդեն իսկ տրամադրել է ժամանակավոր պաշտպա-նություն (փախստականի կարգավիճակ)՝ երաշխավորելով Հայաստանում բնակ-վելու, աշխատելու և կենսական ծառայու-թյուններից, ինչպես օրինակ՝ առողջա-պահությունից, կրթությունից և սոցիալա-կան ապահովությունից օգտվելու նրանց իրավունքները: Ներքին գործերի նախա-րարության միգրացիայի և քաղաքացիու-թյան ծառայությունն ավելի քան 82,000 փախստականի տրամադրել է փախ-ըստականի քարտ՝ հեշտացնելու վերջին-ներիս ադապտացիան և նշված հիմնա-րար իրավունքների հասանելիությունը:

2023թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպությունը Փախըս-տականների համակարգման ֆորումի շրջանակներում հրատապ կերպով ստեղ-ծել է Գենդերային աշխատանքային խումբ՝ նվիրված փախստականների կա-րիքներին արձագանքման հարցում գեն-դերային ուղղորդման (mainstreaming) առաջխաղացմանը և կանանց ու աղջիկ-ների հզորացմանը: Փախստական կա-նայք բախվել են բազմաբնույթ մարտա-հրավերների՝ փորձելով կրել երեխաների, տարեցների ու հաշմանդամություն ունե-ցող անձանց խնամքի աճող բեռը, միա-ժամանակ մաքառելով տնտեսական մասնակցության խոչընդոտների դեմ՝ պայմանավորված նոր միջավայրին ան-ծանոթ լինելով, սահմանափակ սոցիա-լական կապերով և մշակութային ու լեզ-վական տարբերություններով:

Շարունակվող ճգնաժամի պատճառով առաջացած հոգեբանական տրավման իր հերթին ավելի է արգելակել արժանա-պատիվ աշխատանք գտնելու և համայն-քային նախաձեռնություններում ներ-գրավվելու կանանց կարողությունը: Փախստական կանանց զգալի մասը գլխավորում է իր տնային տնտեսությունը և ապավինում Կառավարության տրամա-դրած մարդասիրական աջակցությանը՝ մասնավորապես կացարանով ապահով-մանն ու դրամական օգնությանը: Այնուա-մենայնիվ, ֆինանսական կայունության հրատապ անհրաժեշտությունը նրանց կանգնեցնում է շահագործման և բռնութ-յան ենթարկվելու վտանգի առջև:

Եթե ՓԿԱԾ-ի ուշադրության կենտրոնում պետական զարգացման շրջանակներում փախստականների ինտեգրումը և սո-ցիալական համախմբման խթանումն է, ապա ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմա-կերպությունն ընդգծում է կանանց

կողմից ղեկավարվող (ԿՂԿ), կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղ-վող (ԿԻՊԿ), խաղաղության խթանմանն աջակցող, ինչպես նաև թերներկայաց-ված խմբերի հետ աշխատող կազմակեր-պությունների բովանդակալից մասնակ-ցայնությունն ապահովելու հույժ կարե-վորությունը: Վերջիններիս ներգրավվածությունը կեն-սական է ներառական ու գենդերարծա-գանքող քաղաքականությունների և ծրա-գրերի մշակման հարցում, որոնք արդյու-նավետ կերպով կհասցեագրեն գենդե-րային անհավասարությունը և կնպաս-տեն կայուն զարգացմանը: ՄԱԿ-ի Կա-նանց հարցերով կազմակերպության հրավիրած այս խորհրդակցությունը կոչ-ված էր խթանելու Հայաստանում անցու-մային գործընթացի և «Մարդասիրական աջակցություն–զարգացում–խաղաղութ-յուն» գենդերարծագանքող առանցքի շուրջ ռազմավարական քննարկումները:

Խնդիրները

1-ին օրը

խորհրդակցությունը նպատակ ուներ ԿՂԿ-ների և ԿԻՊԿ-ների ներկայացուցիչներին մի գաղափարի շուրջ հավաքելով՝ նպաստել անցումային համատեքստում գենդերային հա-վասարության, կանանց հզորացման, փախըս-տական կանանց ու աղջիկների ներառական ինտեգրմանն առնչվող առանցքային առաջ-նահերթությունների, մարտահրավերների ու հնարավորությունների համատեղ բացահայտ-մանը: Քննարկումը հագեցած էր փախստա-կաններին առաջնային աջակցություն ցուցա-բերելու արդյունքում մասնակիցների քաղած դասերով և արժեքավոր դիտարկումներով:

2-րդ օրը

խորհրդակցությունը կենտրոնացավ անցու-մային գործընթացի և պետական զարգացման ռազմավարություններում փախստականների ինտեգրման վերաբերյալ քննարկումներին ԿՂԿ-ների և ԿԻՊԿ-ների ակտիվ մասնակցու-թյան խթանման վրա: Այն նպատակ ուներ ապահովել այս կազմակերպությունների ներ-կայացուցիչների բովանդակալից ներգրա-վումը գործող ու նորաստեղծ համակարգող մարմիններում, մասնավորապես՝ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (ԿԽԱ) բա-նաձևի Ազգային գործողությունների ծրագրի (ԱԳԾ) իրականացման մեխանիզմներում:

Արդյունքը

Այս զեկույցն արտացոլում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) հետ երկօրյա խորհրդակցության արդյունքները: Այն ամփոփում է քննարկման հիմնական կետերը և ուրվագծում առաջարկները՝ ուղղված հետագա գործողություններին ու համագործակ-ցության հնարավորություններին:

ԿՂԿ-ները և ԿԻՊԿ-ները. Կանանց հիմնադրամ, «Կանանց կենտրոն. Շուշի» ՀԿ, Կանանց ռեսուրսային կենտրոն, «Դու մենակ չես» ՀԿ, «Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ, «Կանանց իրավունքների տուն» Գյումրի, «Կանանի» ՀԿ, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալի-ցիա, Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն, «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, Արմավիրի զարգացման կենտրոն, Դեմոկրա-տիան այսօր, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա, Մարդու իրավունքների հետազոտութ-յունների կենտրոն, Կանանց աջակցման կենտրոն, Կանանց օրակարգ, Ֆեմֆորվարդ ՀԿ, Սեռա-կան բռնության ճգնաժամային կենտրոն, «Կռունկ» ՀԿ, Ուկրաինական ֆորում ՀԿ, Մարտունու

կանանց համայնքային խորհուրդ, ՎԻՆՆԵԹ Հայաստան, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան, «Հանուն հավասար իրավունքների» ՀԿ, «ՕքսԵՋԵՆ» հիմնադրամ և այլն:

Կառավարության ներկայացուցիչները. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միասնական սոցիալական ծառայություն, Արդարադատության նախարարության, Քննչական կոմիտե, Երևանի քաղաքապետարան:

Դոնոր համայնքը. Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն (ՍԻԴԱ), Հայաստանում շվեյցարական համագործակցության գրասենյակ, Հայաստանում Կանադայի դեսպանատուն, Հայաստանում Եվրոպական միության դիտորդական կարողություն, Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատուն, Հայաստանում Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ), Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն, Համաշխարհային բանկ, Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ:

ՄԱԿ-ի գործակալությունները. ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակ, ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ):

ՕՐ 1

Ներածություն

Վրաստանում ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության ներկայացուցիչ և Հարավային Կովկասի հետ կապերի գծով պատասխանատու տիկին Կաորի Իշիկավան մասնակիցներին ողջունեց՝ ընդգծելով կանանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների կենսական ներդրումը փախստականների ներառման ավելի լայն հնարավորությունների բացահայտման, ինչպես նաև պետական ծրագրերում գենդերային ուղղորդման ու հավասարության խթանմանն ուղղված հետագա գործողությունների համար առաջարկություններ հավաքագրելու հարցում: Սա ներառում է նաև Անցումային գործընթացում և Հայաստանի երրորդ ԱԳԾ-ում փախստականների կացարանային և մարդասիրական կարիքները հասցեագրելը: Քանի որ երկրորդ ԱԳԾ-ն մոտենում է ավարտին, տիկին Իշիկավան կոչ արեց ուժեղացնել Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը՝ բարելավելու ԱԳԾ-ի հաջորդ գործարկումը և առաջ մղելու տարածաշրջանում գենդերային հավասարությունն ու կանանց հզորացումը:

Կաորի Իշիկավա, ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության ներկայացուցիչ և Հարավային Կովկասի հետ կապերի գծով պատասխանատու

Նիստ 1. Փախստականների պաշտպանությունը և հզորացումը Հայաստանում. Կառավարության, քաղաքացիական հասարակության և ՄԱԿ-ի գործակալությունների դիտարկումները

Սոֆի Բոստանջյան, Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ, ԱՍՀՆ

Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ տիկին Սոֆի Բոստանջյանը ներկայացրեց 2023թ. սեպտեմբերից ի վեր նախարարության գործադրած ջանքերը՝ ուղղված տեղահանվածների՝ մասնավորապես, կանանց կարիքների հասցեագրմանը: Նախարարության ներկայացուցիչը շեշտեց բոլոր մարզերում «ապահով տարածքների» ստեղծման ծրագրի կարևորությունը գենդերային բռնության դեմ պայքարում և կանանց հզորացմանն ուղղված ջանքերում:

ԱՍՀՆ-ի կողմից վերջերս իրականացված կարիքների գնահատումը բացահայտել է, որ փախստական կանայք բախվում են լուրջ մարտահրավերների՝ հատկապես աշխատանքի տեղավորման հարցում: Հայաստանում փախստական կանանց միայն 16%-ն է գտել իր հմտություններին համապատասխան աշխատանք՝ չնայած նրան, որ Լեռնային Ղարաբաղում կանանց զբաղվածության շեմը եղել է 60%: Սա առավել հրատապ է դարձնում աշխատաշուկայում գենդերային խզվածքը նվազեցնելու և կանանց տնտեսական հնարավորություններն ընդլայնելու կարիքը:

Սոֆի Բոստանջյանն ընդգծեց նաև հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև ընտանիքի խնամող, հատկապես՝ մեծ ընտանիքի հոգածության բեռը կրող կանանց առջև ծառացած մարտահրավերները: Միջազգային գործընկերների հետ համատեղ՝ ԱՍՀՆ-ի կողմից մշակված Գենդերային ռազմավարության նախագիծն առաջնահերթություն է տալիս զբաղվածության, հաշմանդամություն ունեցող անձանց անձնական օգնականի տրամադրման ծառայությանը, ինչպես նաև երեքից ավելի երեխա ունեցող ընտանիքներին օժանդակությանը:

ԱՍՀՆ-ի ներկայացուցիչն ամփոփեց Գենդերային ռազմավարության հետևյալ վեց առաջնահերթությունները.

1. Որոշումների ընդունման գործընթացում գենդերային խտրականության վերացում և կանանց հավասար մասնակցայնության խթանում:
2. Գենդերազգայուն աշխատաշուկայի զարգացում՝ գենդերային խզվածքը կրճատելու և աշխատավայրում պաշտպանվածությունը բարձրացնելու նպատակով:
3. Կրթության և գիտության ոլորտում կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովում:
4. Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության և գենդերային բռնության կանխարգելում և հասցեագրում:
5. Կլիմայի փոփոխության քաղաքականության մեջ գենդերարձագանքող մոտեցումների ներառում և իրազեկության բարձրացում:

Քնարիկ Մկրտչյան, ԿԽԱ-ի փորձագետ և «Կանանց օրակարգ» ՀԿ-ի հիմնադիր

ԿԽԱ-ի փորձագետ և «Կանանց օրակարգ» ՀԿ-ի հիմնադիր տիկին Քնարիկ Մկրտչյանը հատկապես կարևորեց կանանց դերի ճանաչումը հակամարտություններում, որն առաջին անգամ պաշտոնապես ամրագրվել է ՄԱԿ-ի 1325 բանաձևով: Նա ընդգծեց քաղաքացիական հասարակության դերը ԱԳԾ-ի ջատագովության հարցում՝ նշելով 2019թ.-ից ի վեր Հայաստանի կողմից արդեն երկու ԱԳԾ ընդունելու հանգամանքը: Այս ծրագրերն անդրադառնում են միջազգային և պետական համագործակցությանը, մշտադիտարկմանն ու գնահատմանը, իրազեկության բարձրացմանը, ինչպես նաև դրանց տեղայնացված իրագործմանը համայնքներում:

Այնուամենայնիվ, տիկին Մկրտչյանը մատնանշեց հիմնական մարտահրավերները՝ ներառյալ անհամարժեք բյուջետավորումը, թերի մշտադիտարկումն ու գնահատումը, նաև տեղայնացման նվազ ջանքերը:

Նա շեշտեց բյուջեի ռազմավարական բաշխման, մշտադիտարկման ու գնահատման գործուն մեխանիզմների և ավելի ուժեղ տեղայնացման անհրաժեշտությունը՝ Հայաստանում ԱԳԾ-ն արդյունավետ իրականացնելու և ԿԽԱ-ի օրակարգը խրախուսելու համար:

Եվ քանի որ Հայաստանը մշակում է իր երրորդ ԱԳԾ-ն, Քնարիկ Մկրտչյանը խորհուրդ է տալիս առաջնահերթությունը տալ հետևյալ կետերին.

1. Տեղահանված կանանց սոցիալ-տնտեսական աջակցություն՝ ներառյալ հասանելիությունը ծառայություններին, կենսապայմաններին և հոգեսոցիալական օժանդակությանը:
2. Կոնֆլիկտներից տուժած կանանց տնտեսական հզորացում՝ մասնագիտական ուսուցման, ձեռնարկատիրական ծրագրերի և ֆինանսական ռեսուրսների հասանելիության միջոցով:
3. Հակամարտությունների կարգավորման և խաղաղության կառուցման գործում կանանց բանակցային հմտությունների հզորացում:
4. Մշտադիտարկման ու գնահատման գործուն մեխանիզմներ՝ ԱԳԾ-ի առաջընթացին հետևելու և հաշվետվողականությունն ապահովելու համար:
5. Ծագող մարտահրավերների, ինչպես օրինակ՝ կիբերանվտանգության և կլիմայի փոփոխության հանդեպ գենդերարձագանքող մոտեցումներ:
6. Ավելի լայն տեղայնացում և Տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավում ԱԳԾ-ի իրականացման գործում:
7. Գենդերազգայուն բյուջետավորում՝ բոլոր ոլորտներում հավասարությանը նպաստելու համար:
8. Պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների միջև արդյունավետ հաղորդակցության մեխանիզմներ:

Գվենոլեն լը Կոստեր, ՄԱՓԳՀ-ի արտակարգ իրավիճակների հարցերով ավագ պաշտոնյա

ՄԱՓԳՀ-ի արտակարգ իրավիճակների հարցերով ավագ պաշտոնյա տիկին Գվենոլեն լը Կոստերը ներկայացրեց Հայաստանի ՓԿԱԾ-ի արդյունքները և ներկաներին ծանոթացրեց անցումային գործընթացին: 2023թ. հոկտեմբերից ի վեր՝ ՓԿԱԾ-ը, համատեղելով 60 գործընկեր կազմակերպությունների ջանքերը, հավաքել է գնահատված 97 միլիոն ԱՄՆ դոլարի 51%-ը՝ ներգրավելով ավելի քան 100 կազմակերպություն իրագործման փուլում:

Տիկին լը Կոստերն ընդգծեց Գենդերային աշխատանքային խմբի ազդեցիկ դերը՝ հավասարապես կարևորելով կանանց ու փախստականների կողմից ղեկավարվող կազմակերպությունների աճող ներգրավվածությունը փախստականների կարիքներին արձագանքման և ներառման ծրագրերի իրականացման և տեղայնացման գործում:

Հաշվի առնելով, որ փախստականների 52%-ը (որը Հայաստանի ընդհանուր բնակչության 4%-ն է) կանայք և աղջիկներ են, լը Կոստերը շեշտեց գենդերազգայուն մոտեցումների անհրաժեշտությունը: Անցումային փուլը նպատակ ունի մշակելու երկարաժամկետ ռազմավարություններ, որոնք շարունակական մարդասիրական աջակցությունը համակցում են է՛լ ավելի լայնածավալ զարգացման նախաձեռնություններին, որպեսզի արդյունավետ հասցեագրեն փախստականների կարիքները և ապահովեն նրանց ներառումը հայաստանյան հասարակությանը:

ՄԱՓԳՀ-ի ներկայացուցիչն անցումային փուլի (2024թ. ապրիլ-դեկտեմբեր) առնչությամբ առանձնացրեց մի քանի հիմնական նկատառում.

1. Ընթացիկ մարդասիրական կարիքները բավարարելուն զուգահեռ՝ կայուն լուծումներին անցնելու ռազմավարական համակարգում:
2. Խոցելի բնակչությանը շարունակական աջակցություն տրամադրելով հանդերձ՝ պատասխանատու ելք արտակարգ փուլից:
3. Կայուն լուծումներին նպաստելու նպատակով համապատասխանեցում զարգացման շրջանակներին, ներառյալ Փախստականների վերաբերյալ գլոբալ պայմանագիրը:
4. Ռազմավարական ջատագովություն՝ խթանելու փախստականների ներառումն ու բարեկեցությունը:
5. Թիրախային միջամտություններ բարձր ռիսկայնության խմբերի, մասնավորապես փախըստական կանանց ու աղջիկների համար՝ ապահովելու նրանց պաշտպանությունն ու հզորացումը:

Նիստ 2. Կանանց կողմից ղեկավարվող կազմակերպություններն առաջնագծում. դիտարկումներ փախստականների կարիքներին արձագանքման ջանքերից

Համայնքահեն կազմակերպությունների կին ղեկավարները խոսեցին իրենց սեփական փորձից ու դիտարկումներից, որ ձեռք էին բերել 2023թ. փախստականներին ուղիղ աջակցություն ցուցաբերելիս: Նրանք անդրադարձան ինչպես հաջողություններին, այնպես էլ մարտահրավերներին՝ ապագա մարդասիրական արձագանքների բարելավման համար առաջարկելով արժեքավոր դասեր:

Լիզա Մաթևոսյան, «Կանանց կենտրոն. Շուշի» ՀԿ (փախստականներով զբաղվող ՀԿ Երևանում). Կիրառելով «Կանանց կենտրոն. Շուշի» ՀԿ-ի 1990-ականներին և 2020-ին փախստականներին աջակցելու մեծածավալ փորձը՝ մենք կարողացանք դիմագրավել 2023թ. ճգնաժամի ուրույն մարտահրավերներին: Թեև ընդունող համայնքն այս անգամ ավելի հյուրընկալ եղավ, սակայն անհապաղ վերադարձի հույսի բացակայությունը պահանջում էր երկարաժամկետ պլանավորում:

Հայաստանում նոր միջավայրին հարմարվելը դժվար էր, ինչը զուգորդվում էր 2023թ. հետևանքների ծանրությամբ և կազմակերպության՝ անձնական տրավմաները կառավարել փորձող փոքր թիմով: Չնայած այս խոչընդոտներին՝ շահառուներն իրենց գոհունակությունն էին հայտնում ՀԿ-ի ջանքերից:

Կանանց ռեսուրսային կենտրոնի հետ համագործակցությունը նպաստեց Հայաստանի ՀԿ-ների դաշտում մեր կազմակերպության ինտեգրմանը: Նշանակալից հաջողություններից էր փախստականների ներգրավումը աջակցության ջանքերում, ինչպիսիք էին բախտակից փախստականների համար անկողնային պարագաներ կարելը՝ խթանելու նրանց հզորացումն ու ֆինանսական անկախությունը:

Լիանա Սահակյան, «Սոսե» ՀԿ, Սյունիքի մարզ. ականատես լինելով փախստականների սկզբնական ներհոսքին՝ «Սոսե» ՀԿ-ն անհրաժեշտ համարեց կազմակերպել համայնքային անհապաղ աջակցություն՝ ներհոսքի առաջին 7-8 օրում Կանանց ռեսուրսային կենտրոնի և Կանանց հիմնադրամի օժանդակությամբ փախստականներին տրամադրելով առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ տաք ըմպելիք, տակդիրներ, միջադիրներ և հիգիենայի այլ պարագաներ:

Գիտակցելով հոգեսոցիալական բարեկեցության կարևորությունը՝ մենք տրամադրեցինք արտթերապիայի սեանսներ, ինչը, հավանաբար, միակ այդպիսի ծառայությունն է Գորիսում: Շարժվելով առաջ՝ մենք հանձն ենք առել հզորացնել տեղահանված անձանց, հատկապես կանանց, որ կարողանան վերակառուցել իրենց կյանքը:

Տարբեր կազմակերպությունների հետ համագործակցելով՝ մենք նպատակ ունենք նրանց տրամադրել հմտություններ և ռեսուրսներ՝ տնտեսական անկախության և վերականգնման համար:

Նաիրա Հարությունյան, «Դու մենակ չես» ՀԿ, Վայոց ձորի մարզ. որպես արձագանք վերջին ճգնաժամին՝ «Դու մենակ չես» ՀԿ-ն ընդլայնեց իր գործունեության շրջանակը՝ փախստականներին էական օժանդակություն, այդ թվում՝ հոգեսոցիալական աջակցություն ցուցաբերելու համար: Առաջնահերթությունը տրվեց սահմանամերձ գոտում ռեսուրսների քարտեզագրմանը, կացարաններով ապահովմանը և նոր ժամանած փախստականներին հյուրընկալելու պատրաստ ընտանիքների հայտնաբերմանը: Նվիրյալ կամավորների մեր ցանցը վճռորոշ դեր խաղաց առաջին անհրաժեշտության պարագաների հավաքագրման ու բաշխման հարցում: Իսկ գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ Վայքի գրանցման կետում մենք հիմնեցինք հատուկ տարածք՝ նախատեսված կրծքով կերակրող մայրերի համար:

Պետական հաստատությունների հետ մեր ամուր գործընկերությունը և կարողությունների զարգացմանը մեր պատրաստակամությունը հնարավորություն տվեցին արդյունավետ արձագանքել այս ճգնաժամին և համակողմանի աջակցություն ցուցաբերել դրա կարիքն ունեցողներին:

Նարե Հայրապետյան, Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն, Կոտայքի մարզ. Կազմակերպությունն իրականացրեց կարիքների համապարփակ գնահատում՝ հավաքագրելով 6303 փախըստականի տվյալ՝ հասկանալու նրանց կացարանային և աջակցության այլ կարիքները: Այնուամենայնիվ, տվյալների միասնական բազայի բացակայությունը խոչընդոտեց պետական գերատեսչությունների հետ համակարգված աշխատանքին:

Փախստական կանանց տնտեսական հզորացման՝ պետության նախաձեռնած եռամսյա ծրագիրը բախվեց մի շարք մարտահրավերների՝ գործատուների ոչ պատշաճ ընտրության և թույլ մշտադիտարկման պատճառով: Ծրագրի որոշ շահառուներ հաղորդել են թերավճարման մասին: Այս խնդիրը լուծելու համար մենք կարևորում ենք պատասխանատու գործատուների ներգրավման և ծրագրային հստակ ուղեցույցների առկայությունը:

Հաջողված նախաձեռնություն էր Փախստականների հզորացման կենտրոնների ստեղծումը՝ կենտրոնացված տեղեկույթի և աջակցության տրամադրման համար: Այնուամենայնիվ, հետևողական աջակցություն և ռեսուրսների արդար բաշխում ապահովելու մարտահրավերները մնում են չլուծված, քանի որ փոքր կազմակերպությունները հաճախ կրում են զգալի աշխատանքային ծանրաբեռնվածություն, սակայն ստանում անհամաչափ՝ ավելի քիչ ֆինանսավորում:

Քրիստինա Բաղդասարյան, «Կանանի» ՀԿ, Շիրակի մարզ. Շիրակում «Կանանի» ՀԿ-ն տեղահանվածների շրջանում դիտարկել է տարաբնույթ կարիքներ: Մինչ առավել ակտիվ փախստականները պատրաստակամորեն ներգրավվում էին աջակցության ծրագրերում, պասիվ փախստականներին այդ մեխանիզմները հասանելի չէին: Մենք հանձն ենք առել նպաստել օժանդակության արդար բաշխմանը՝ կենտրոնանալով հոգեկան առողջության և երկարաժամկետ հզորացման ծրագրերի վրա:

Կանանց ռեսուրսային կենտրոնի օգնությամբ՝ մենք հեշտացրել ենք տեղահանված կանանց ադապտացիան՝ տրամադրելով հոգեսոցիալական աջակցություն և կազմակերպելով մոտիվացնող հանդիպումներ տեղացի կանանց հետ: Առանձնահատուկ ազդեցիկ նախաձեռնություն էր բարբառային թերապիայի սեանսների շարքը, որում կանայք խոսում էին իրենց մշակութային և խոհանոցի առանձնահատկություններից՝ խրախուսելով փոխըմբռնումը:

Շարժվելով առաջ՝ նպատակ ունենք հասցեագրել ժամանակակից ընտանիքների առջև ծառացած մարտահրավերները՝ ստեղծելով ակտիվ մասնակցության և խնդիրների խմբային լուծման հարթակ: Այս ջանքերով մենք ձգտում ենք տեղահանված և ընդունող համայնքների շրջանում խթանել դիմակայունությունը, միասնությունն ու հզորացումը:

Նիստ 3. Գենդերարձագանքող գործողություն փախստական կանանց և աղջիկների համար. խոցելի խմբերի բացահայտում

Տարբեր ԿՂԿ-ների և ԿԻՊԿ-ների ներկայացուցիչներ ներգրավվեցին մասնակցային վարժություններում ՝ բացահայտելու և հասցեագրելու այն անկյունաքարային ոլորտները, որոնք մտահոգիչ են փախստականների կարիքներին արձագանքման և անցումային գործընթացներում գենդերային հավասարության ու կանանց հզորացման տեսանկյունից՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին:

Բացահայտված հիմնական խոցելի խմբերից են.

- **Հաշմանդամություն ունեցող կանայք.** առնչվում են ֆիզիկական ու հոգեկան առողջության տարբեր աստիճանի մարտահրավերների, հաճախ բախվում են բազմաշերտ խտրականության և բռնության ու շահագործման հանդեպ խոցելիության աճող ռիսկերի:
- **Բազմաթիվ խոցելիությունների հետ բախվող կանայք.** ներառյալ միայնակ մայրերը (անկախ երեխաների քանակից), հղիները և տարեց կանայք՝ հաշվի առնելով այս խմբերից յուրաքանչյուրի առջև ծառացած ուրույն մարտահրավերներն ու համընկնող անբարենպաստ պայմանները:
- **Բռնություն վերապրածներ.** ներառյալ թրաֆիքինգի, ընտանեկան և սեռական բռնության, ինչպես նաև գենդերային բռնության այլ ձևերի զոհերը՝ հաշվի առնելով այդ ամենի երկարաժամկետ ֆիզիկական և հոգեբանական ազդեցությունը:
- **Հակամարտությունից և տեղահանությունից տուժած կանայք.** հատկապես նրանք, ովքեր ունեն անհետ կորած, մահացած, վիրավորված կամ կալանավորված ընտանիքի անդամներ, ինչպես նաև կորցրել են ընտանիքի հիմնական կերակրողին:

Մասնակիցները շեշտեցին կանանց խոցելիությունների փոխկապակցվածությունն ու փոխհատվելիությունը՝ ընդգծելով, որ մեծ թվով կանայք միաժամանակ առերեսվում են անբարենպաստ պայմանների բազմաթիվ ձևերի հետ: Սոցիալական կապիտալը կամ դրա բացակայությունն էականորեն անդրադառնում է կանանց համար ռեսուրսների և աջակցության հասանելիության վրա:

Բացահայտված հիմնական մարտահրավերները ներառում են.

- **Տվյալների և գիտելիքի բացերը.** առանձին խոցելի խմբերի վերաբերյալ քանակական և որակական տվյալները շարունակում է մնալ անբավարար:
- **Կարողությունների և ռեսուրսների սահմանափակումները.** ծառայություններ մատուցողները հաճախ անհրաժեշտ չափով վերապատրաստված, մասնագիտացած և ֆինանսական ռեսուրսներով ապահովված չեն փախստական կանանց համալիր կարիքները պատշաճ կերպով հոգալու համար:
- **Սոցիալական խարան և խտրականություն.** հանրության բացասական վերաբերմունքն ու խտրական պրակտիկաներն ավելի են մարգինալացնում խոցելի խմբերին՝ վերջիններիս համար խոչընդոտելով ծառայությունների և հնարավորությունների հասանելիությունը:
- **Ծառայությունների անհավասար հասանելիություն.** բազմաթիվ խոցելի կանայք բախվում են կացարանի, առողջապահության և տրանսպորտի պես կենսական ծառայությունների հասանելիության խոչընդոտների՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են դրանց արժեքը, գտնվելու վայրը և տեղեկույթի պակասը:

Նիստ 4. Փախստականակենտրոն պետական և տեղական զարգացման ծրագրերի առանցքային առաջնահերթությունների, բացերի, մարտահրավերների և հնարավորությունների բացահայտում

Հաջորդ համագործակցային վարժությամբ մասնակիցները բացահայտեցին գենդերային հավասարության և կանանց հզորացման հիմնական առաջնահերթությունները, բացերը, մարտահրավերներն ու հնարավորությունները՝ ավելի փախստականակենտրոն պետական և տեղական ծրագրեր մշակելու համատեքստում: Այս մասնակցային գործընթացը նպատակ ուներ ապահովելու փախստական կանանց մասնահատուկ կարիքների ու տեսլականների արտացոլումը բոլոր առաջնահերթ ոլորտներում:

1. Կանանց առաջնորդության և քաղաքականության մշակման մասնակցայնության խթանում	
Մարտահրավերները	• Սոցիալ-տնտեսական խոցելիություն • Առկա գործընթացների վերաբերյալ սահմանափակ տեղեկաց-վածություն ու ընկալում • Փախստականի կարգավիճակով պայմանավորված խտրակա-նություն և խարան • Լեզվական և մշակութային խոչընդոտներ • Ռեսուրսների սահմանափակություն (ժամանակ, տրանսպորտ, երեխայի խնամք) • Միջավայրային և ֆիզիկական խոչընդոտներ • Որոշում ընդունող ֆորմալ կառույցներին առնչվող փորձառության բացակայություն • Որոշումների ընդունման գործընթացների թափանցիկության և դրանց հանդեպ վստահության բացակայություն

Հնարավորությունները	• Փախստական կանանց ներգրավել առկա ծրագրերում և միջոցառումներում՝ նրանց ներառումն ու մասնակցայնությունը խթա-նելու համար: • Փախստական կանանց համար ապահովել հավասար հնարավորություններ՝ ծրագրման և որոշումների ընդունման գործընթաց-ների բոլոր ասպեկտներում: • Ճանաչել փախստական կանանց շրջանում առկա, անգամ սահմանափակ, ներուժը: Ներառման ջանքերը պետք է նպատակ ունենան օգտագործել և զարգացնել այդ ներուժը: • Խթանել մասնակցայնությունը և հզորացումը՝ օգտագործելով փախստական կանանց առկա ներուժը:
Առանցքային ուղղությունները	• Խթանել միջոլորտային համագործակցությունը փախստական կանանց կարիքները համապարփակ կերպով հասցեագրելու համար: • Ոչ ֆորմալ կրթության միջոցով հզորացնել փախստական կա-նանց՝ ընդլայնելով նրանց գիտելիքները, հմտությունները և գործորդությունը: • Նպաստել բովանդակալից մասնակցությանը քաղաքացիական հասարակության գործողություններին՝ ներառյալ որոշումների ընդունմանը և ծրագրերի մշակմանը: • Ծրագրերի և ռազմավարությունների նախագծման ու մշակման կենտրոնում ունենալ փախստական կանանց ձայնը: • Լսելի դարձնել փախստական կանանց պատմությունները՝ խթա-նելու ապրումակցումն ու ըմբռնումը:
Առանցքային գործընկերները	• ՔՀԿ-ներ • Փորձագիտական խմբեր • Տեղական բիզնեսներ • Ստեղծել փախստականների ինտեգրումը խթանող մարզային կոմիտեներ: • Զբաղվել ԿԽԱ-ին նվիրված ժամանակավոր խորհրդարանական հանձնաժողովի ստեղծման ջատագովությամբ:
Անհրաժեշտ ռեսուրսները	• Իրավաբանական ծառայություններ • Վերապատրաստումներ • Փոքր կրթական դրամաշնորհներ

2. Կանանց տնտեսական հզորացում

Մարտահրավերները	• Պայմանական աշխատանք. փախստականները կարող են կորցնել իրենց կարգավիճակը, եթե անցնեն գրանցված աշխատանքի, քանի որ դա նրանցից հաճախ պահանջում է դառնալ Հայաստանի քաղաքացի. քայլ, որը նրանք ներկայումս վարանում են կատարել: • Խնամողի չվճարվող աշխատանք. ընտանիքի խնամողի պարտականությունների անհամաչափ բեռ: • Երեխայի խնամքի սահմանափակ տարբերակներ. երեխայի խնամքի հասանելի ու մատչելի հնարավորությունների բացակայություն: • Լեզվական խոչընդոտներ. հաղորդակցության և ինտեգրման խոչընդոտում: • Բռնություն և շահագործում. թրաֆիքինգի և հետապնդումների նկատմամբ խոցելիության աճ: • Իրազեկվածության պակաս. իրենց իրավունքների և հասանելիքի մասին սահմանափակ իմացություն: • Հմտությունների բացեր. հատկապես գենդերային բռնություն վերապրածների շրջանում, ինչն ազդում է աշխատանքի հեռանկարների վրա: • Խտրականության փոխկապակցվածություն. փախստականի կարգավիճակը միախառնվում է առկա կողմնակալություններին: • Շահագործող աշխատանքային պրակտիկաներ. խոցելի են գործատուների անարդար վերաբերմունքի հանդեպ:
Հնարավորությունները	• Մշակութային բազմազանությունը կարող է հենք դառնալ աճի և նորարարության խթանման համար: • Աշխատուժի նոր ռեսուրսների ներհոսքը կարող է նպաստել պետականաշինությանը և տնտեսական զարգացմանը: • Անցյալի փորձը, հատկապես 1990-ականներից քաղած դասերը կարող են օժանդակել զարգացման ներկա ռազմավարությունների մշակմանը:
Առանցքային ուղղությունները	• Իրազեկման արշավներ՝ փախստականներին իրենց իրավունքների մասին տեղեկացնելու նպատակով: • Պաշտպանության մեխանիզմների մասին տեղեկության տրամադրում Կառավարության և ՀԿ-ների կողմից: • Հակախտրական և կրթական օրենսդրական բարեփոխումներ: • Լեզվի ուսուցման պարտադիր ծրագրերի իրականացում: • Զբաղվածության պետական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքային խմբի ստեղծում: • Երեխա ունեցող փախստական ընտանիքների համար ցերեկային խնամքի ճկուն տարբերակների ներդրում: • Թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված իրազեկման ծրագրեր: • Հայաստանյան աշխատաշուկա մուտք գործելը հեշտացնելուն ուղղված կրթական ծրագրերի մշակում: • Գործատուների վարքաբանությունը կարգավորող միջոցառումների խստացում: • Աշխատանքային իրավունքների թեժ գծի ստեղծում՝ խորհրդատվության և աջակցության համար:

Առանցքային գործընկերները	Պետական տնտեսական հզորացման ծրագրերի մշտադիտարկման համատեղ աշխատանքային խումբ, որի անդամ են. • Կանանց տնտեսական հզորացման գործում մասնագիտացած ՀԿ-ները, • Փախստականների իրավունքներով զբաղվող ՀԿ-ները, • Կանանց իրավունքների պաշտպանության ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ները, • Հետազոտական կազմակերպություն, • Փախստականների կին ներկայացուցիչ գյուղական համայնքից, • Փախստականների կին ներկայացուցիչ, որն ունի հաշմանդամություն, • Միայնակ մայրերի աջակցության ծրագրի շահառու, • ԱՍՀՆ-ի (Օրենսդիր ժողովի անդամ, **Member of Legislative Assembly**) ներկայացուցիչ, • Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ, • Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչ, • Խորհրդարանի աշխատանքային հանձնաժողովի ներկայացուցիչ: Խմբի նպատակը և գործունեությունը. • Բարձրացնել փախստական կանանց տնտեսական հզորացման առկա խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը: • Մշակել առաջարկներ՝ բարելավելու տնտեսական հզորացման պետական ծրագրերը: • Ապահովել այդ ծրագրերի պատշաճ իրականացումը: • Կառավարել թեժ գծի գործունեությունը և համապատասխան հարցերի վերաբերյալ տրամադրել իրավաբանական խորհրդատվություն:
Անհրաժեշտ ռեսուրսները	• Կանանց և փախստականների իրավունքների վերաբերյալ բիզնես ոլորտի ներկայացուցիչներին կրթելու նպատակով՝ վերջիններիս հետ համագործակցությամբ իրականացնել իրազեկության բարձրացման ծրագրեր: • Ստեղծել գործատուների համար ձևված աշխատանքային ընթացակարգեր՝ ուղղված աշխատավայրում կանանց և փախստականների իրավունքների և բարեկեցության ապահովմանը: • Իրականացնել խրախուսող աջակցության ծրագրեր, որոնք կգրավեն փախստականներին դրականորեն նպաստելու աշխատուժին: • Սահմանել բանկային արտոնություններ՝ հատուկ հարմարեցված այն կանանց և փախստականներին, որոնք ձգտում են ձեռնարկատիրական գործունեություն ծավալել:

3. Կանանց նկատմամբ բռնության հաղթահարում

Մարտահրավերները	• Կանանց շրջանում իրավունքների սահմանափակ իմացություն: • Համակարգի և ինստիտուտների նկատմամբ անվստահության տարածվածություն: • Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկույթի հասանելիության խոչընդոտներ: • Սոցիալական իրավունքների ոչ պատշաճ պաշտպանվածություն՝ հատկապես խոցելի խմբերի շրջանում: • Պետական քաղաքականության և տեղական կառավարման մակարդակներում գենդերազգայուն մոտեցման բացակայություն: • Ձգայուն դեպքերի գաղտնիության ոչ բավարար պահպանում: • Պաշտպանության կարևոր գործիքների, ինչպես օրինակ՝ Ստամբուլյան կոնվենցիայի ներդրման բացակայություն: • Ավանդական արժեքների պահպանում, ինչը խոչընդոտում է դեպի հավասարությունն առաջընթացին: • Կանանց սահմանափակ տնտեսական անկախություն, ինչը հարատև է դարձնում կախվածությունը: • Սոցիալական դերերի անհավասար բաշխում գենդերային կարծրատիպերի հիմքով:
Հնարավորությունները	• Պետությունից աջակցություն ստացող ընտանեկան բռնության կենտրոնների առկայություն հանրապետության բոլոր մարզերում: • Պետական և ոչ պետական կառույցների համագործակցություն ընտանեկան բռնության հաղթահարման հարցում: • Ընտանեկան բռնության կանխարգելման և դրան արձագանքման համապարփակ հայեցակարգային շրջանակների սահմանում: • Ընտանեկան բռնության հաղթահարման միջազգային արդյունավետ փորձի փոխանակմանը օժանդակում:
Առանցքային ուղղությունները	• Ե՛վ պետական, և՛ համայնքային մակարդակներում քաղաքականության մշակման մեջ ներգրավվում: • Ակտիվ մասնակցություն համայնքային քննարկումներին և որոշումների ընդունման գործընթացներին: • Իրազեկության բարձրացման նախաձեռնությունների և ռազմավարական հաղորդակցման արշավների իրականացում: • Սոցիալական իրավունքների պաշտպանություն՝ արդյունավետ միջոցառումների կիրարկմամբ: • Պետական կառույցներում գենդերազգայունության խթանում: • Գաղտնիության ապահովում տարաբնույթ մեխանիզմների գործադրմամբ:

Առանցքային գործընկերները	• Համագործակցել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ՝ փախստականներին տրամադրվող անվճար սոցիալական ծառայությունների, այդ թվում՝ թեժ գծերի վերաբերյալ տեղեկույթի տարածման համար: • Ոստիկանության և Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների, Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, դպրոցների, հիվանդանոցների և պոլիկլինիկաների անձնակազմների համար իրականացնել վերապատրաստումներ: • Ստեղծել Գենդերային ռազմավարության Մշտադիտարկման խումբ՝ վերահսկելու և գնահատելու իրականացման ջանքերը:
Անհրաժեշտ ռեսուրսները	• Ավելացնել գենդերային բռնության դեմ ուղղված ծրագրերի ֆինանսավորումը: • Աջակցել կանանց իրավունքների պաշտպաններին՝ բարձրացնելով նրանց տոկունությունը: • Ստեղծել խմբային ամոքման հարթակ՝ գենդերային բռնության վերապրածների ամոքումն ու աջակցությունը հեշտացնելու նպատակով:

4. Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը. մարդասիրական արձագանք և պատրաստվածություն

Մարտահրավերները	• Ցածր իրազեկվածություն, ուստի հանրային հետաքրքրվածության բացակայություն ԿԽԱ-ի խնդիրների նկատմամբ: • Անվտանգության հանդեպ միակողմանի մոտեցում, որը կենտրոնանում է կա՛մ սոցիալական, կա՛մ ռազմական ասպեկտների վրա՝ անտեսելով ԿԽԱ-ի համակողմանի բնույթը: • ՀԿ-ների սահմանափակ ներգրավվածություն ԿԽԱ-ի ոլորտում: • Խաղաղության կառուցման և հակամարտությունների կարգավորման գործում կանանց դերի թերագնահատվածություն: • ԿԽԱ-ի ԱԳԾ-ի անարդյունավետ գործարկում: • Ծայրահեղ սահմանափակ ռեսուրսներ, երբ ֆինանսավորման մեծ մասը գալիս է միջազգային աղբյուրներից, իսկ պետության և ՀԿ-ների ներդրումը նվազագույնն է: • ԿԽԱ-ի նախաձեռնությունների իրագործման կարողության և քաղաքական կամքի բացակայություն: • Գործողությունների առանցքի անընդհատ փոփոխում, ինչը հանգեցնում է անհետևողականության և առաջընթացի բացակայության: • ԱԳԾ-ներում առաջընթացի և ազդեցության չափման հստակ չափորոշիչների բացակայություն: • Սահմանափակ ռեսուրսների և աջակցության պատճառով շահագրգիռ կողմերի մասնագիտական այրում: • Ինստիտուցիոնալ հիշողության բացակայություն, ինչը հանգեցնում է անցյալի սխալների կրկնության:

Հնարավորությունները	• Միջազգային կառույցների ներգրավվածություն և հավատարմություն միջազգային փաստաթղթերին: • Միջգերատեսչական հանձնաժողովի առկայություն: • Արտաքին գործերի նախարարության կողմից համագործակցելու պատրաստակամություն:
Առանցքային ուղղությունները	• Սոցիալ-տնտեսական աջակցության տրամադրում փախստական կանանց: • Հակամարտությունից տուժած կանանց տնտեսական հզորացման խթանում: • Կանանց բանակցային կարողությունների զարգացում: • Գենդերային հավասարության և կանանց հզորացման նախաձեռնությունների մշտադիտարկման մեխանիզմների հիմնում կամ կատարելագործում: • «Կիբերանվտանգության» և «կլիմայի փոփոխության» արտացոլում ԿԽԱ-ի օրակարգում: • Տեղական ինքնակառավարման մարմինների դերի տեղայնացում և ուժեղացում ԿԽԱ-ի իրականացման գործում: • Գենդերազգայուն բյուջետավորման կիրառում ԱԳԾ-ի կատարման ընթացքում: • Երկարաժամկետ ֆինանսավորման տրամադրում շահառուների հետ ուղիղ աշխատող ՀԿ-ներին, որոնք գործում են ԿԽԱ-ի խնդիրների ոլորտում: • Կին իրավապաշտպանների հզորացման նախաձեռնություններ: • Կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում գտնվող կանանց և աղջիկների մարդասիրական կարիքների հասցեագրում:
Առանցքային գործընկերները	• Արտաքին գործերի նախարարությունը և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման միջգերատեսչական հանձնաժողովը: • ԱՍՀՆ-ն (հատկապես մարդասիրական արձագանքման աշխատանքների համար): • Ներքին գործերի նախարարությունը (ճգնաժամերին արձագանքմանը պատրաստվածության համար): • Միջգերատեսչական հիմնական հանձնաժողովի օրակարգի վրա աշխատող ՔՀԿ-ները: • Միջազգային ցանցերը, որոնք կենտրոնացած են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման և տեղայնացման վրա: • Տեղական ինքնակառավարման մարմինները: • Կարմիր խաչի միջազգային և տեղական կոմիտեները:

Անհրաժեշտ ռեսուրսները	• ԿԽԱ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացման համատեղ դասընթաց Կառավարության և քաղաքացիական հասարակության համար՝ օժանդակելու նրանց միջև համագործակցությանը: • Գենդերարձագանքող բյուջետավորման վերաբերյալ վերապատրաստումների շարք: • Միջազգային հանրության կողմից ֆինանսական միջոցների հատկացում ԱԳԾ-ի իրականացմանը: • Մարզային ՀԿ-ների կարողությունների զարգացում՝ ներառյալ ճգնաժամային կառավարման ռազմավարությունների և մեխանիզմների ստեղծում կամ բարելավում: • ՔՀԿ-ների շրջանում վաղ արձագանքման և/կամ բռնության ու հակամարտությունների կանխարգելման մեխանիզմների ներդրում: • Առցանց տեղեկատվական հարթակի ստեղծում, որը թույլ կտա մուտք գործել մարդասիրական աջակցության կարիք ունեցող անձանց կոդավորված տվյալների բազա՝ մանրամասնելով օգնության տրամադրումը և ըստ այդմ նախանշելով հետագա քայլերը:

ՕՐ 2

Ներածություն

Խորհրդակցության երկրորդ օրը հրավիրվել էին Հայաստանի պետական մարմինների, միջազգային դեսպանատների և ՄԱԿ-ի գործակալությունների ներկայացուցիչներ՝ արծարծելու նախորդ օրվա քննարկումների արդյունքները:

Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Տաթևիկ Ստեփանյանը նիստի բացման խոսքում բարձր գնահատեց քաղաքացիական հասարակության, միջազգային գործընկերների և Կառավարության միջև համագործակցությամբ արձանագրված առաջընթացը: Նա ընդգծեց փորձագետների և քաղաքացիական հասարակության ներգրավվածության կարևորությունը՝ աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ եկող օրենսդրական բացերը բացահայտելու հարցում:

Տիկին Ստեփանյանը հաստատեց կոլեկտիվ հանձնառությունը սոցիալական պաշտպանության համակարգի դիմակայունությունը և արձագանքելիությունը բարձրացնելու հարցում՝ շեշտելով կանանց և փախստականների կողմից ղեկավարվող կազմակերպությունների թիրախային առաջարկների անհրաժեշտության կարիքը:

Tatevik Stepanyan, Deputy Minister of Labor and Social Affairs

Նա ընդգծեց, թե որքան կարևոր է առաջնահերթություն տալ կոնկրետ առաջարկների հիմքով ռեսուրսների հատկացմանը՝ սահմանափակ ռեսուրսների պայմաններում առավելագույն ազդեցությունն ապահովելու համար:

Françoise Jacob, UN Resident Coordinator in Armenia

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկին Ֆղանսուազ Ժակոբն ընդգծեց և՛ համաշխարհային, և՛ տեղական մակարդակում ՄԱԿ-ի հավատարմությունը գենդերային հավասարությանը՝ առանձնացնելով Հայաստանում աշխատանքի երեք հիմնական ուղղությունները. գենդերային բռնության դեմ պայքար, տնտեսական հզորացման խթանում և կանանց քաղաքական մասնակցայնության առաջխաղացում: Նա կարևորեց որոշ ոլորտներում նկատված առաջընթացը՝ միաժամանակ ընդգծելով շարունակական ջանքերի անհրաժեշտությունը՝ մասնավորապես կանանց քաղաքական ներկայացվածությունն ընդլայնելու և ՀԿ-ների կողմից մատուցվող կենսական ծառայությունների համար կայուն ֆինանսավորում ապահովելու ուղղությամբ:

Տիկին Ժակոբն ուշադրություն հրավիրեց այնպիսի մարտահրավերների վրա, ինչպիսիք են ճգնաժամերի ընթացքում գենդերային խնդիրներին կարևորություն չտալը, կանանց քաղաքական մասնակցության սահմանափակ առաջընթացը և ՀԿ-ների մատուցած ծառայությունների համար համարժեք ֆինանսավորման բացակայությունը: Ապա ընդգծեց մարգինալացված խմբերի, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող կանանց հաճախ անտեսված կարիքները հասցեագրելու անհրաժեշտությունը:

ԿԽԱ-ի օրակարգի առնչությամբ ՄԱԿ-ի մշտական համակարգողը փաստեց ԱԳԾ-ների հարցում Հայաստանի առաջընթացը՝ միաժամանակ ջատագովելով երրորդ ԱԳԾ-ի մշակման մեջ քաղաքացիական հասարակության ավելի լայն ընդգրկումը: Նա ընդգծեց գենդերային տեսանկյունից ներառող խաղաղության հաստատման կարևորությունը և հորդորեց ներդրումներ կատարել կանանց վերապատրաստումներում, որպեսզի վերջիններս մասնակցեն խաղաղության բանակցություններին՝ բոլոր մակարդակներում: Նա նաև կոչ արեց խաղաղության քննարկումներում ներառել դրույթներ, որոնք կերաշխավորեն բանակցություններում գենդերային հավասարակշռությունն ու հեռանկարները:

Եզրափակիչ նիստ. կանանց կողմից ղեկավարվող և կանանց իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների իրագործելի առաջարկները և պահանջվող ռեսուրսները՝ անցումային փուլում փախստական կանանց արդյունավետ ներառման համար

Խորհրդակցության ավարտին ԿՂԿ-ները և ԿԻՊԿ-ները ներկայացրեցին անցումային ծրագրում իրենց հնարավոր ներգրավման մեխանիզմներն և ներդրումները.

- ԿՂԿ-ների և ԿԻՊԿ-ների գլխավորությամբ ստեղծել ժամանակավոր աշխատանքային խումբ՝ Գենդերային ռազմավարության միջոցառումների ծրագրում փախստականներին առնչվող խնդիրների ներառման վերաբերյալ առաջարկները մշակելու համար:

- Ստեղծել Մշտադիտարկման խումբ Զբաղվածության պետական ծրագրերի վերահսկման և խորհրդատվության համար՝ ապահովելու փախստական կանանց և մարգինալացված խմբերի ներառականությունը:

- ԿՂԿ-ներն ու ԿԻՊԿ-ներն ինտեգրել Հայաստանի գենդերային ռազմավարության մշտադիտարկման և գնահատման գործընթացում՝ նրանց ձայները լսելի դարձնելու և դիտարկումները հաշվի առնելու համար:

- ԿՂԿ-ներն ու ԿԻՊԿ-ներն ընդգրկել Ազգային գործողությունների երրորդ ծրագրի (ԱԳԾ III) մշակման մեջ՝ փախստական կանանց տեսլականն ու կարիքներն արտացոլելու նպատակով:

- Փախստականների ԿՂԿ-ները և ԿԻՊԿ-ները ներգրավել Հայաստանի Գենդերային հարցերով բարձրագույն մարմնում՝ ապահովելու նրանց ներկայացվածությունը որոշումների ընդունման գործընթացներում:

- Համագործակցել Ազգային ժողովի հետ՝ առաջ մղելու հակախտրական օրինագծերը:

- Ստեղծել պետական թեժ գծեր՝ փախստականներին հոգեբանական և իրավաբանական աջակցություն ցուցաբերելու համար:

- Ձևավորել փախստական կանանց շահերի պաշտպանության հարթակ՝ լսելի դարձնելու նրանց ձայնն ու փորձառությունը:

- Աջակցել Կառավարությանը՝ ընդունելու Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 190 կոնվենցիան՝ աշխատավայրում բռնության և հետապնդումների հաղթահարման նպատակով:

- Փախստական կանանց համար իրականացնել կարճաժամկետ վերապատրաստման ծրագրեր՝ ընդլայնելու հայաստանյան աշխատաշուկայում աշխատանք գտնելու նրանց հնարավորությունները:

- Փախստական երեխաների՝ մանկապարտեզ ընդունվելու հարցում բացառել բյուրոկրատական խոչընդոտները:

- Տարեց փախստականների համար նախատեսել վճարովի խնամքի ծառայություններ:

- Փախստականներին առնչվող ծրագրերի իրականացման հարցում ապահովել մարզային և տեղական կառավարման մարմինների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Տեղական ինքնակառավարման մարմիններում կիրառել գենդերարձագանքող բյուջետավորում:

- Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ մշակել Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) սխեմա՝ նախատեսված փախստական կանանց համար:

- Հիմնել ԿՂԿ-ների ու ԿԻՊԿ-ների և բիզնեսի միջև համագործակցության հարթակ՝ ստեղծելու փախստական կանանց համար տնտեսական հզորացման հնարավորություններ:

Փախստական կանանց կարիքների հասցեագրման համար առաջարկվող գործողությունները հաջողությամբ իրականացնելու համար ԿՂԿ-ներն ու ԿԻՊԿ-ներն առանձնացրեցին իրենց անհրաժեշտ ռեսուրսները.

- Դիմակայունության զարգացում. հզորացնել ԿՂԿ-ների և ԿԻՊԿ-ների կարողությունները՝ հաղթահարելու այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են մասնագիտական այրումը և աղետներից վերականգնումը՝ ներառյալ ամոքման հարթակների ստեղծման միջոցով:

- Մշտադիտարկման և գնահատման գործիքներ. մշակել գենդերային հավասարության և կանանց հզորացման պետական ծրագրերի արդյունավետ մշտադիտարկման ու գնահատման գործիք-ներ և մեխանիզմներ:

- Գենդերային ազդեցությունը գնահատելու կարողությունների զարգացում. հզորացնել համապատասխան շահագրգիռ կողմերի կարողությունները՝ իրականացնելու պետական քա-ղաքականության և նախաձեռնությունների գենդե-րային ազդեցության գնահատումը:

- ԿԽԱ-ի կարողությունների զարգացում. պետական մարմիններին և ՔՀԿ-ներին տրամադրել ԿԽԱ-ի օրակարգի վերաբերյալ համապարփակ ուսուցում և աջակցություն:

- Ռեսուրսների հատկացում խնամքի ծառայություններին. հատկացնել համարժեք ռեսուրսներ՝ աջակցելու կանանց և նրանց ընտանիքների կենսական խնամքի ծառայություններին՝ ներառյալ առողջապահությունը, երեխաների և տարեցների խնամքը:

- Գենդերարծագանքող հետազոտությունների իրականացում և տվյալների հավաքագրում. ներ-դրումներ կատարել համապարփակ հետազոտություններում՝ ներառյալ ակադեմիական ուսումնասիրությունները, դեպքի ուսումնասիրությունները, որակական ու քանակական վերլու-ծությունները՝ դրանց հիմքով փաստահեն քաղաքականությունների և գործողությունների մշակ-ման համար:

- Նոր ապաստարանների հիմնում. ընդլայնել ընտանեկան բռնություն վերապրածների համար ապաստարանների և ապահով տարածքների ցանցը՝ տրամադրելով կենսական աջակցության ծառայություններ:

- ԿԽԱ-ի վերաբերյալ միջազգային խորհրդատվական խումբ. ստեղծել միջազգային խորհրդա-տըվական խումբ՝ ԿԽԱ-ի քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական ուղղորդում և առաջարկություններ տրամադրելու համար:

- Բազմակողմանի փորձաքննություն. տարբեր ոլորտների, այդ թվում՝ մշտադիտարկման և գնահատման մասնագետների փորձը ներառել գենդերային ուղղվածություն ունեցող նախա-ձեռնությունների մշակման, իրականացման և գնահատման գործում:

Հավելված 1: Օրակարգ

Օր 1. մայիսի 13	
09:30 -10:00	Գրանցում
10:00 - 10:15	Բացման խոսք. Տիկին Կարոի Իշիկավա, Վրաստանում ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության ներկայացուցիչ և Հարավային Կովկասի հետ կապերի գծով պատասխանատու
10:15 - 10:30	Համաժողովի նպատակների և օրակարգի ներկայացում
10:30 - 11:30	Գենդերային հավասարության քաղաքականության շրջանակը. առաջնահերթություններ, ձեռքբերումներ և հետագա զարգացումներ, • ԱՍՀՆ-ի անդրադարձը Հայաստանի 2024-2028 թթ. գենդերային ռազմավարությանը • Արտաքին գործերի նախարարության անդրադարձը Հայաստանի ԿԽԱ-ի 3-րդ ԱԳԾ-ի առաջնահերթություններին • ՄԱՓԳՀ-ի կողմից անցումային ծրագրի ներկայացում Հարցուպատասխան
11:30-11:45	Սուրճի ընդմիջում
11:45 - 13:00	**Պանելային քննարկում.** անդրադարձներ, լավագույն պրակտիկաներ և փախստականներին արձագանքման ծրագրից քաղած դասեր
13:00 - 14:00	Ճաշ
14:00 - 15:00	**Վարժություն 1.** «Կացարանային մարդասիրական աջակցություն - անցում – խաղաղություն» առանցքի գործընթացի առաջնահերթ խմբերի բացահայտում. կարիքներ, կարողություններ և անհրաժեշտ ռեսուրսներ
15:00 - 15:15	Սուրճի ընդմիջում
15:15 - 16:30	Վարժություն 2. Փախստականակենտրոն պետական և տեղական զարգացման ծրագրերի առանցքային առաջնահերթությունների, բացերի, մարտահրավերների և հնարավորությունների բացահայտում
16:30 - 16:45	1-ին օրվա ամփոփում

Day 2: May 14

09:45 - 10:00	1-ին օրվա հիմնական եզրակացությունների և առաջնահերթությունների ամփոփում
10:00 - 11:00	Վարժություն 3. Ռեսուրսների քարտեզագրում՝ հղում կատարելով ազգային ծրագրերին, անցումային ծրագրում ԿՂԿ-ների և ԿԻՊԿ-ների ներգրավման մեխանիզմներին ու ներդրումներին
11:00 - 11:30	Սուրճի ընդմիջում
11:30 - 11:45	Հիմնական ելույթներ Տկն. Տաթևիկ Ստեփանյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Տկն. Ֆղանսուազ Ժակոբ, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող
11:45 - 13:00	Ներկայացում. Մաստեր պլանի ներկայացում Հայաստանի կառավարությանը և միջազգային հանրությանը, այնուհետև՝ հարցուպատասխան
13:00 - 13:15	2-րդ օրվա և միջոցառման ամփոփում
13:15 - 14:00	Ճաշ

Հավելված 2. Մասնակիցների ցանկ

Կազմակերպություն	Անուն	Ազգանուն
Ագաթ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանություն ՀԿ	Գայանե	Գրիգորյան
ԱՄՆ դեսպանատուն	Իրինա	Մկրտչյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Սոֆի	Բոստանջյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Աննա	Դավթյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Արուս	Աթանեսյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Արմինե	Ալավերդյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տաթևիկ	Ստեփանյան
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	Սոնա	Առաքելյան
Դեմոկրատիան այսօր ՀԿ	Գյուլնարա	Շահինյան
Դու մենակ չես ՀԿ	Նաիրա	Հարությունյան
ԵՄ պատվիրակություն	Բրունո	Մոնտարիոլ
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ	Սարինե	Հայրիյան
Եվրոպական միության առաքելությունը Հայաստանում	Սառա	Խոջոյան
Եվրոպայի խորհուրդ	Լիանա	Ամիրբեկյան
Երևանի քաղաքապետարան	Միլենա	Կարապետյան
Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա	Նվարդ	Մանասյան
Կանադայի դեսպանություն	Andrew	Turner
Կանանի ՀԿ	Քրիստինա	Բաղդասարյան
Կանանց աջակցման կենտրոն	Հասմիկ	Գևորգյան
Կանանց Իրավունքների Տուն - Գյումրի	Գոհար	Վարդանյան
Կանանց կենտրոն Շուշի	Լիզա	Մաթևոսյան
Կանանց կենտրոն Շուշի	Գայանե	Համբարձումյան
Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն	Նարե	Հայրապետյան
Կանանց ռեսուրսային կենտրոն	Լարա	Ահարոնյան
Կանանց Օրակարգ ՀԿ	Քնարիկ	Մկրտչյան
Համաշխարհային բանկ	Արմինե	Գրիգորյան
Հայաստանի վիճակագրական կոմիտե	Լուսինե	Քալանթարյան
Հայաստանում կանանց հիմնադրամ	Գոհար	Շահնազարյան
Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն	Դավիդ	Ցունակակե
Հայաստանում Շվեյցարական համագործակցության գրասենյակ	Ուրսուլա	Լաուբլի
Հանուն հավասարության իրավապաշտպան ՀԿ	Մանուշ	Մարալլչյան
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ ՀԿ	Սյուզաննա	Գրիգորյան
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ	Նատալիա	Մարտիրոսյան
ՀՀ արդարադատության նախարարություն	Հեղինե	Յենգոյան

ՀՀ քննչական կոմիտե	Վաղարշ	Աղաբեկյան
ՀՌԿԿ - Հայաստան	Սոնա	Բալասանյան
ՄԱԲՀ	Ծովինար	Հարությունյան
ՄԱԿ ՓԳՀ	Գվենոլենն	լը Կոստեր
ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց	Կաորի	Իշիկավա
ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց	Ռեբեկա	Աչին
ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց	Օլգա	Ազատյան
ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց	Զառա	Մկրտչյան
ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակ	Ֆղանսուազ	Ժակոբ
Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն	Անահիտ	Սիմոնյան
Մարտունու կանանց համայնքային խորհուրդ	Սերինե	Աղաբեկյան
Միասնական սոցիալական ծառայություն	Մերինե	Մեհրաբյան
Միգրացիայի միջազգային կազմակերպություն	Ալիսսա	Լալիմե
ՅՈՒՆԻՍԵՖ	Սիլվիա	Մեստրոնի
Շվեդիայի դեսպանություն	Գայանե	Մամիկոնյան
Ուկրաինական ֆորում ՀԿ	Ելենա	Շեվչուկ
Ուկրաինական ֆորում ՀԿ	Ալյոնա	Շատալովա
Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն	Անուշ	Գաբրիելյան
Սոսե կանանց հիմնահարցեր ՀԿ	Լիանա	Սահակյան
ՎԻՆՆԵԹ Հայաստան	Աննա	Ալեքսանյան
ՕքսԵՋեն հիմնադրամ	Քրիստինե	Մխիթարյան
ՖեմՖորվըրդ ՀԿ	Իրինա	Հովհաննիսյան
GIZ Հայաստան	Կարինե	Սիմոնյան
GIZ Հայաստան	Կատրին	Բուդեր-Պելց

Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները խորհրդակցության մաս-նակիցներինն են և անպայման չէ, որ արտացոլեն ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազ-մակերպության, Շվեդիայի կառավարության, Նորվեգիայի կառավարության կամ վերջիններիս հետ առնչակից կազմակերպությունների տեսակետները:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Զարուհի Տոնոյանի հետ. zaruhi.tonoyan@unwomen.org:

Լուսանկարները և ձևավորումը՝ Անի Հովհաննիսյանի, ՄԱԿ-ի Կանանց հարցերով հայաստանյան գրասենյակ: